

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՋԵՄՄԱ ՍԱՄՎԵԼԻ

**ԾԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏԵՐԸ ԵՎ  
ՏԱՐԵՑ ԱՆՁԱՆՑ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԺԹ.00.03- «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

**ՄԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2024**

Ատենախոսության թեման հաստատվել է Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում:

**Գիտական ղեկավար՝**

հոգեբանական գիտությունների դոկտոր  
**Մեղրակ Ադասու Մեղրակյան**

**Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝**

հոգեբանական գիտությունների դոկտոր  
**Նաիրա Ռաֆիկի Հակոբյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու  
**Նարինե Ասկանազի Հարությունյան**

**Առաջատար  
կազմակերպություն՝**

Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան  
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի դեկտեմբերի 12-ին, ժամը 12<sup>00</sup> –ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲԿԳԿ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի նոյեմբերի 11-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական  
խորհրդի գիտական քարտուղար,  
հոգեբանական գիտությունների դոկտոր

Կամո Երեմի Վարդանյան

## ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Բնակչության ընդհանուր թվաքանակում տարեցների մասնաբաժնի շեշտակի աճն այսօր բնորոշ է աշխարհի բազմաթիվ երկրներին: Այդ միտումը նկատվում է նաև Հայաստանում, որտեղ վերջին 30 տարիների ընթացքում տարեցների մասնաբաժինը բնակչության ընդհանուր թվաքանակում 5,6%-ից հասել է գրեթե 14%-ի:

Նշվածը պահանջում է առավել մեծ ուշադրություն դարձնել նրանց հոգեբանական, սոցիալական, բժշկական և այլ խնդիրների լուծմանը, ինչն անհնար է առանց սոցիալ-հոգեբանական սպասարկման համակարգի ամրապնդման և ակտիվ երկարակեցության ապահովման միջոցառումների ներդրման:

Վերջին տարիներին Հայաստանում ակտիվորեն տարվում են աշխատանքներ տարեցներին հասցեական օգնության ցուցաբերման, սոցիալական ծառայությունների տրամադրման չափանիշների մշակման և կիրառման ուղղությամբ: Սակայն կոնկրետ անձի համար համարժեք, հասցեական, անհատական ծառայություններ տրամադրելու համար դեռևս չեն մշակվել տարեց անձի հոգեբանական և սոցիալական դետերմինանտների կիրառման մեթոդաբանություններ:

Հաշվի առնելով ծերացման անհատական բնույթը, տարեցների ֆիզիոլոգիական հնարավորությունների, սոցիալական կապերի սահմանափակումը և բնավորության գծերի տարիքային շեշտվածությունը, կարևոր է համալիր ուսումնասիրել ծերության ֆիզիոլոգիական, հոգեբանական և սոցիալական դետերմինանտները ձկուն մոտեցում ցուցաբերելով բացահայտված դետերմինանտների փոխհարաբերակցությանը ու փոխազդեցությանը տարբերակված հոգեբանական և սոցիալական ծառայություններ տրամադրելիս: Ընդունելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության տարիքային դասակարգման սահմանագծերը (60-74, 75-89, 90+) և էլնելով նրանից, որ դետերմինանտների ուսումնասիրության հարցում նշված սահմանագծերը խիստ հարաբերական են, քանի որ տարիքի հետ փոխվում են թե՛ ֆիզիոլոգիական և թե՛ հոգեբանական ու սոցիալական դետերմինանտները, մենք խնդիր ենք դրել ուսումնասիրել դրանք 65+ տարեկան անձանց մոտ, ինչը նույնականացնում ենք «ծերություն» հասկացության հետ:

Սոցիալ-հոգեբանական դետերմինանտներ ասելով մենք նկատի ունենք մարդու անձնական բնութագրերի, միջանձնային փոխհարաբերությունների, ներանձնային դիրքորոշումների, ընդհանուր տեսլականի ու դերային կառուցվածքի վրա ազդող գործոնները: Սոցիալական հարաբերությունների տեսանկյունից մենք քննարկել ենք այնպիսի հոգեբանական դետերմինանտներ, ինչպիսիք են մարդու վարքագիծը, հույզերը, զգացումները, արժեքները, բարոյականությունը, մտածողության մոդելները և բարոյությունները, որոնք մեծ մասամբ պայմանավորված են դրանց նկատմամբ հենց իր և իր շրջապատի վերաբերմունքով և առկա սոցիալական կարծրատիպերով:

Այս իմաստով արդիական ենք համարում Ֆունկցիոնալության, կենսագործունեության և առողջության սահմանափակումների միջազգային դասակարգման (ՖՄԴ) մոտեցումների և սկզբունքների կիրառումը, ինչը, հաշվի առնելով դետերմինանտների ողջ համալիրը, շրջապատող միջավայրի և անհատական գործոնների ազդեցությունը, մարդու ակտիվության և մասնակցության վրա ազդող բոլոր խանգարումների, պահանջումների, պահպանված հնարավորությունների բազմակողմանի, բազմամասնագիտական գնահատման նոր հնարավորություններ է տալիս:

**Հիմնախնդրի մշակվածության աստիճանը:** Հոգեբանական գիտության ոլորտում ծերության, տարիքային հոգեբանական, կենսաբանական և սոցիալական առանձնահատկություններին, անձի ձևավորման միջավայրի, սոցիալ-հոգեբանական դետերմինանտների, սոցիալ-հոգեբանական սպասարկման համակարգի ինստիտուցիոնալացման առանձնահատկություններին, ակտիվ ծերացման հայեցակարգին, տարեցների կարիքների ուսումնասիրման և այլ տարաբնույթ հիմնախնդիրներին անդրադարձել են տարբեր մասնագետներ՝ Վ.Դ. Ալպերովիչը, Լ.Բ. Անցիֆերովան, Ա.Գ. Ասմոլովը, Ֆ.Վ. Բասսինը, Տ.Վ. Կարսայևսկայան, Ե.Վ.Կամենը, Մ.Վ.Երմոլևան, Բ.Ֆ. Լոմովը, Ի.Վ. Բլաուբերգը, Է.Գ. Յադինը, Մ.Դայները, Լ.Վիլտնը, Ի.Ֆ. Ալբերգովան, Ն.Ֆ. Դեմենտևան, Տ.Ի. Սապոժնիկովան, Ի.Վ.Սալոֆեևը, Ն.Պ. Շչուկինան, Օ.Բ. Դորոգինան:

Սոցիալական ծերունահոգեբանության և զարգացման հոգեբանության ասպարեզում կարևոր են արևմտյան հեղինակների (Ի.Կեմպեր, Դ.Կ. Մրոզեկ, Մ.Ջ. Մեդիգան, Մ. Պինկուարտ, Կ.Մ. Պրենդ, Գ.Տ. Ռեկեր, Է.Դ. Սմիթ, Ն.Ստեվերինկ, Ա.Ստեպտոու) աշխատությունները, որոնք ուսումնասիրում են ծերունական տարիքի սոցիալ-հոգեբանական դետերմինանտների հարցերը:

Տարեց անձանց տարիքային, հոգեբանական փոփոխությունների և սոցիալականացման հարցերը մասնակիորեն քննարկվել են հայրենական հոգեբանների Ս.Ա. Սեդրակյանի, Ս.Ռ. Գևորգյանի, Ն.Ռ. Հակոբյանի, Կ.Ե. Վարդանյանի, Ա.Ա. Նալչաջյանի աշխատանքներում:

Մասնագիտական գրականության վերլուծությունը հաստատում է տարեցների սոցիալ-հոգեբանական դետերմինանտների ուսումնասիրման հետազոտությունների արդիականությունը: Դրա հետ մեկտեղ, նկատել ենք այս արդիական հիմնախնդրի գիտական անբավարար մշակվածությունը, սոցիալական հոգեբանության և սոցիալական աշխատանքի ոլորտի մասնագետներին ուղղված կոնկրետ առաջարկներ պարունակող հետազոտությունների բացակայությունը:

**Հետազոտության նպատակը** - ուսումնասիրել տարեց և ծերունական տարիքի անձանց սոցիալ-հոգեբանական դետերմինանտները և մշակել Հայաստանում նրանց սոցիալ-հոգեբանական սպասարկման կազմակերպումը կատարելագործելու առաջարկներ:

**Հետազոտության օբյեկտը** - Հայաստանի տարեց քաղաքացիները՝ որպես բնակչության խոցելի խումբ:

**Հետազոտության առարկան** - ծերացման սոցիալ-հոգեբանական դետերմինանտները և տարեցների ակտիվության վրա ազդող գործոնները:

**Վարկածը** - ենթադրվում է, որ ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտների ուսումնասիրումը և կոնկրետ մարդու համար դրանցից առաջատարների որոշումը կարող է հանգեցնել սոցիալական և հոգեբանական ծառայությունների կարիքի չափանիշների որոշման նկատմամբ գիտական մոտեցման:

Ենթադրվում է նաև, որ տարեց անձանց ֆունկցիոնալության գնահատման և սոցիալ-հոգեբանական ծառայությունների նրանց կարիքի չափանիշների որոշման համար կարող է կիրառվել սոցիալական, հոգեբանական և ֆիզիոլոգիական դետերմինանտների բազմամասնագիտական գնահատման կենսահոգեբանասոցիալական մոդելը՝ հաշվի առնելով Ֆունկցիոնալության, կենսագործունեության և առողջության սահմանափակումների միջազգային դասակարգման (ՏՄԴ) սկզբունքներն ու մոտեցումները:

Հետազոտության նպատակից և վարկածից բխում են հետևյալ **խնդիրները**.

1. Բացահայտել տարեցների սոցիալական և հոգեբանական ծառայությունների կարիքի, դրանց տրամադրման ձևի, մեթոդների, տրամադրվող ծառայությունների ծավալի և որակի վրա ազդող հիմնական ֆիզիոլոգիական, սոցիալական և հոգեբանական դետերմինանտները՝ կախված տարեց անձանց տարիքային փոփոխություններից և սոցիալական միջավայրում նրանց մոտիվացիայից:

2. Պարզել, թե որքանով դերային վարքագիծը և մեկ դերի փոխարինումը մյուսով կարող են բացահայտել փոփոխվող աշխարհում տարեց անձանց հոգեկան առողջության վրա սոցիալական և հոգեբանական դետերմինանտների ազդեցությունը:

3. Նույնականացնել սոցիալական միջավայրի, կյանքի և կեցության պայմանների դերը նորմատիվ մոդելների, արժեքների և վարքագծի ձևավորման գործում: Որոշել տարեցների տարբեր խմբերի նախընտրելի սոցիալական ակտիվության հիմնական ուղղությունները և ակտիվացնող տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները:

4. Որոշել բոլոր դետերմինանտները, դրանցից գլխավորներն առանձնացնելու, ինչպես նաև տարբերակները հաշվի առնելու գործում համակարգային մոտեցման կարևորությունը, ինչը հնարավորություն կտա ճկուն մոտեցում դրսևորել բացահայտված սոցիալական, հոգեբանական, ֆիզիոլոգիական դետերմինանտների փոխհարաբերակցությանը, փոխազդեցությանը, տարեց անձի համար այս կամ այն դետերմինանտի կարևորությանը՝ հաշվի առնելով տարիքային, սեռային, իրավիճակային և անձնային առանձնահատկությունները:

**Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը:** Աշխատանքն ամբողջությամբ հիմնված է միջգիտաճյուղային մոտեցման վրա: Հետազոտությունը հենվում է ընդհանուր մեթոդաբանական սկզբունքների վրա: Հետազոտության մեթոդաբանության հիմքում ընկած է համալիր մոտեցումը, համակարգային մոտեցումը (Բ.Ֆ. Լոմով), հասարակության մեջ տարեց անձանց իրական վիճակի, ամբողջակաության և համակարգայնության սկզբունքների հիման վրա նրանց սոցիալական սպասարկման համակարգային վերլուծությունը: Հետազոտության

տեսական և մեթոդաբանական հիմքը կազմել են նաև գործունեության (Լ.Ս. Վիգորսկի, Ա.Ռ. Լուրիա, Ա.Ն. Լեոնտև, Ա.Գ. Սամոլով, Դ.Ա. Լեոնտև), շփման տեսությունները (Ս.Լ. Ռուբինշտեյն, Բ.Ֆ.Լոմով, Լ.Ի. Անցիֆերովա և այլք):

**Հետազոտության մեթոդները:** Հետազոտության մեթոդիկան ներառում է տեսական վերլուծության մեթոդներ, փաստաթղթերի վերլուծություն, փորձագիտական գնահատականների մեթոդ, վիճակագրական մեթոդներ, զրույցներ, հարցազրույցներ, հեղինակային հարցաբաններ, անկախ բնութագրերի մեթոդ:

Ելնելով հետազոտության նպատակից տարեցների սոցիալ-հոգեբանական վիճակի ուսումնասիրությունն անցկացվել է՝ ա) իրենց տանն ապրող, բ) տնային պայմաններում ծառայություններ ստացող, գ) ցերեկային կենտրոններում ծառայություններ ստացող և դ) սոցիալական սպասարկման ստացիոնար հաստատություններում տարեցների համար հատուկ մշակված հարցաթերթերով:

Կիրառվել է հետազոտական մեթոդների համալիր՝

- հարցաթերթեր՝ տարեցների սոցիալ-հոգեբանական սպասարկման այլընտանքային ձևերի կարիքի ուսումնասիրման նպատակով:

- հարցաթերթեր՝ ֆունկցիոնալ սահմանափակումների աստիճանի բացահայտման և առօրյա կյանքում ակտիվության, կյանքի տարբեր ոլորտներում սահմանափակումների գնահատման նպատակով՝ ըստ Բարտելի համաթվի:

- հակադիր պնդումների մեթոդ՝ ըստ «Սոցիոտրոպություն – անկախություն» սանդղակի նորգելանդական վարկածի:

- հարցաթերթեր տարեցների մոտ տագնապայնության վիճակի և դեպրեսիայի ուսումնասիրության նպատակով:

- տարիքային կենսունակության վալիդացված սանդղակ (Resilience Scale for Adults RSA):

- տարեցների ֆունկցիոնալ ունակությունների խանգարումների աստիճանի որոշման մեթոդ (ՖՄԴ):

- հոգեկան կարգավիճակի հետազոտման հարմարեցված սխեմա՝ ըստ պահանջմունքների գնահատման Կեմբրիջի կարգաբանի (CANZAS):

- միայնակության սանդղակ՝ ըստ Ի. Մուրտազիայի, Օ. Ստրիժիցկայի հարմարեցված հարցաբանի:

Ատենախոսական հետազոտության առանձնահատկությունն այն է, որ առաջադրված խնդիրների լուծման և նպատակների իրականացման նկատառումներով վերոնշյալ մեթոդները կիրառվել են փոխկապակցության մեջ:

**Հետազոտության փուլերը և փորձաքննությունը:** Հետազոտությունն իրականացվել է 2008-2023 թվականների ընթացքում երեք փուլով:

Առաջին փուլում (2008-2012 թթ.) իրականացվել է ձեռագրման սոցիալական հոգեբանության դեպրեսիաների ուսումնասիրության հիմնական մոտեցումների տեսական և գործնական վերլուծություն, կյանքի իմաստի, կողմնորոշումների և տարեց ու ծերունական տարիքի անձանց մոտ դրանց առանձնահատկությունների վերլուծություն:

Երկրորդ փուլում (2013-2017 թթ.) մշակվել է տարեց և ծերունական տարիքի անձանց կյանքի ակտիվության և նրանց տրամադրվող սոցիալական և

հոգեբանական ծառայությունների արդյունավետության վրա ազդող սոցիալ-հոգեբանական դետերմինանտների հետազոտական մոդելը:

Երրորդ փուլում (2018-2023 թթ.) կատարվել է հետազոտության հիմնական մասը, որի ընթացքում ուսումնասիրվել է տարեց և ծերունական տարիքի անձանց ֆիզիոլոգիական, սոցիալական, հոգեբանական դետերմինանտների համահարաբերակցությունը: Իրականացվել է ստացված արդյունքների համակարգում, ընդհանրացում, եզրակացությունների ձևակերպում և առաջարկությունների մշակում:

Հետազոտության արդյունքները քննարկվել են Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի հոգեբանության ամբիոնի ընդլայնված նիստերում (2020, 2023, 2024 թթ.) և ներդրվել «Ուրարտու» համալսարանի «Սոցիալական աշխատանք» առարկայի դասավանդման գործընթացում: Հետազոտության առանձին դրույթներ ներդրվել են նաև Հայաստանում տարեցների սոցիալական սպասարկման ստացիոնար, կիսաստացիոնար և տնային սպասարկման կազմակերպման աշխատանքում:

Հետազոտական աշխատանքի թեզերը և առանձին դրույթները ներկայացվել են միջազգային և տարածաշրջանային գիտաժողովներում. Բանգկոկ 2012թ., Երևան 2015 թ., 2017 թ., Օչ 2021թ., Բիշքեկ 2022 թ., 2023թ., Դուշանբե 2021 թ., Տաշքենդ 2022 թ., Սանկտ Պետերբուրգ 2021թ., 2022 թ., 2023 թ., Բելգի 2022 թ., Լովոկուզնեցկ 2022 թ., Մոսկվա 2023 թ., 2024 թ.:

**Հետազոտության փորձարարական բազան:** Հետազոտությունն իրականացվել է տարեցների սոցիալական սպասարկման ստացիոնար հաստատությունների (Երևան քաղաքի Նորքի տարեցների տուն-ինտերնատ և Կապան քաղաքի տարեցների տուն-ինտերնատ), կիսաստացիոնար հաստատությունների (Երևան քաղաքի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերի տարեցների սոցիալական սպասարկման ցեղեկային կենտրոններ), միայնակ տարեցներին սոցիալ-հոգեբանական տնային ծառայություններ տրամադրող «Առաքելություն Հայաստան» կազմակերպության բազայի վրա (Երևան քաղաք, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի մարզեր): Հետազոտությանը մասնակցել են ընտանիքներում ապրող տարեցներ, ինչպես նաև Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի միասնական սոցիալական ծառայության աշխատակիցներ, տարեցների սոցիալական սպասարկման հաստատությունների աշխատակիցներ, ոլորտի մասնագետներ: Ընտրանքի ընդհանուր թիվը կազմում է 738 մարդ:

#### **Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը**

Անցկացված հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունն ապահովվում են հոգեբանական հետազոտության ժամանակակից մեթոդաբանական սկզբունքներով, փոխարացվող մեթոդներով, որոնք կիրառվում են հետազոտության առարկային, նպատակին և խնդիրներին համապատասխան:

## **Աշխատանքի գիտական նորույթը**

1. Հիմնավորել ենք, որ տարեց անձանց սոցիալ-հոգեբանական դետերմինանտների և դրանց պարամետրերի ուսումնասիրման համալիր մոտեցումը հնարավորություն է տալիս նրանց տրամադրել առավել հասցեական և արդյունավետ սոցիալական, հոգեբանական ծառայություններ:

2. Բացահայտել ենք սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման համակարգի կատարելագործման, սոցիալ-հոգեբանական դետերմինանտների վրա հիմնված անհատական մոտեցման սկզբունքի ներդրման միջոցով տարեցների դերային անցման հնարավորությունը պասիվից դեպի ակտիվ:

3. Առաջին անգամ ուսումնասիրվել է ֆունկցիոնալության հերիատրիկ և ծերունաբանական համալիր գնահատման անցկացման նպատակահարմարությունը՝ Ֆունկցիոնալության, կենսագործունեության և առողջության սահմանափակումների միջազգային դասակարգման սկզբունքների և մոտեցումների կիրառմամբ: Առաջարկվում է մեթոդիկա, որը համադրվելով անձի ինքնագնահատականի հետ կարող է տարեցի ֆունկցիոնալ սահմանափակումների և պահպանված հնարավորությունների վերաբերյալ հավաստի տեղեկություն տալ: Ֆունկցիոնալության՝ որպես հիմնական դետերմինանտներից մեկի որոշման նման միջգիտաճյուղային ախտորոշիչ գործընթացի արդյունքում հնարավոր է դառնում մշակել բժշկական, հոգեբանական և սոցիալական համալիր միջոցառումներ, ստեղծել գործողությունների համակարգված ծրագիր, որն ուղղվում է տարեցների երկարաժամկետ աջակցությանը, նրանց ակտիվության բարձրացմանը և անհրաժեշտ հասցեական ծառայությունների տրամադրմանը:

**Հետազոտության տեսական նշանակությունը:** Մեր կողմից իրականացված տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքները կարող են ներառվել սոցիալական հոգեբանության տեսական դրույթներում, լրացնել հիմնախնդրին վերաբերող բովանդակային բազան:

**Ատենախոսական աշխատանքի գործնական նշանակությունը:** Տարեցների ֆիզիոլոգիական, հոգեբանական և սոցիալական դետերմինանտները հաշվի առնելու հետազոտության արդյունքները և տեսական հիմնավորումները հնարավորություն կտան սոցիալական ծառայությունների կարիքի չափանիշների վերանայման և դրանց հիման վրա տարբերակված ծրագրեր և տարեց ու ծերունական տարիքի անձանց սոցիալ-հոգեբանական ուղղորդման տեխնոլոգիաներ մշակելու: Իրականացված տեսական-մեթոդաբանական հետազոտություններից, տարեցների ֆիզիոլոգիական, սոցիալական և հոգեբանական դետերմինանտների ուսումնասիրման արդյունքներից էլնելով մշակվել են տարեցների սոցիալ-հոգեբանական սպասարկման կազմակերպման բարելավմանն ուղղված առաջարկություններ:

## **Ուշադասությանը ներկայացվող հիմնական դրույթները**

- Բացահայտվել է անհամապատասխանություն տարեցների հոգեբանական և սոցիալական ծառայությունների ծավալի ու տեսակների և դրանց պահանջարկի բավարարման հնարավորության միջև սոցիալական սպասարկման ինստիտուտի զարգացման ներկայիս փուլում:



- Վերհանվել են տարեցների ակտիվության և սոցիալական կապերի վերականգնման վրա ազդող գլխավոր սոցիալ-հոգեբանական դետերմինանտները:

- Անհրաժեշտ է հաշվի առնել տարեցների սոցիալական ակտիվության մեր կողմից առաջարկվող հիմնական ուղղությունները, ինչպես նաև անցնել սոցիալական սպասարկման խնամք իրականացնող տեխնոլոգիաներից ակտիվացնող տեխնոլոգիաների:

- Տարեցների ֆունկցիոնալ սահմանափակումների և պահպանված հնարավորությունների (ՖՄԴ հիման վրա) բազմամասնագիտական գնահատման մեթոդիկայի կիրառումը կարող է հասցեական սոցիալական, հոգեբանական և բժշկական ծառայությունների փաթեթի որոշման նոր գործիք դառնալ:

**Ատենախոսության կառուցվածքը:** Աշխատանքը կատարվել է առաջադրված նպատակին և ձևակերպված խնդիրներին համապատասխան, կազմված է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից, հավելվածներից: Ընդհանուր ծավալը 127 էջ է (առանց հավելվածների):

## **ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության վարկածը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդաբանական հիմքը, մեթոդները, անցկացման փուլերը, նպատակը և խնդիրները, բացահայտված են աշխատանքի գիտական նորույթը, գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

**Ատենախոսության առաջին «Օերության դետերմինանտների հիմնախնդիրները և սոցիալ-հոգեբանական սպասարկման կազմակերպման առանձնահատկությունները»** խորագրով գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցում ներկայացված է հոգեբանության մեջ ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտների ուսումնասիրմանը և վերլուծությանը նվիրված գրականության ակնարկը:

Ուշադրություն է դարձվում բնակչության ծերացման գործընթացով պայմանավորված և դրանից բխող ծերության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրներին, ծերանալու տեսակներին, տարեցների սոցիալականացման հիմնախնդիրներին և նոր սոցիալական դերերի հարմարմանը:

Ձևակերպվել է ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտների և սոցիալ-հոգեբանական սպասարկման կազմակերպման առանձնահատկությունների փոխկապվածությունը և փոխպայմանավորվածությունը:

**Երկրորդ գլխում՝ «Տարեցների սոցիալ-հոգեբանական և սոցիալ-դերային առանձնահատկությունները պայմանավորող գործոնները Հայաստանում»,** որը կազմված է չորս ենթագլուխներից, ներկայացվել են Հայաստանում տարեցների սոցիալ-հոգեբանական և սոցիալ-դերային առանձնահատկությունները որոշող գործոնները: Ուսումնասիրվել են ներանձնային հոգեբանական դետերմինանտները,

որոնք կախված են մարդու ապրած կյանքի ուղուց, ինքնուրույնության կորստից, այսինքն՝ ընտանիքի անդամներից կախվածության աստիճանից, կրած տրավմատիկ փորձառությունից, ինչը հատկապես բնորոշ է Հայաստանում ապրող տարեցներին:

Երկրորդ ենթագլխում, հաշվի առնելով, որ սոցիալ-հոգեբանական ծառայությունները տրամադրվում են նախևառաջ միայնակ տարեցներին, հետազոտվել է միայնակության գործոնը: Հետազոտությունը ցույց տվեց, որ տարեցների հիմնախնդիրների շարքում առաջին տեղում միայնակությունն է (մոտ 35%), ընդ որում, միայնակության մասին խոսում են ոչ միայն մենակ ապրող մարդիկ: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ տարեցների կողմից միայնակության ապրումների աստիճանը կախված է այնպիսի սոցիալ-հոգեբանական ցուցիչներից, ինչպիսիք են տարիքը, կրթությունը, միայնակության պատճառը, ինքնասպասարկման ունակությունը և այլն:

Մենք, կիրառելով դժվարությունները հաղթահարելու ունակության, տվյալ տարիքում իր և իր դիրքի ընկալման, էքզիստենցիալ մենակության, համառության, կյանքի իմաստի առկայության հինգ տիքությունները գնահատող կենսունակության վալիդացված սանդղակը (Resilience Scale for Adults RSA), Օ. Սորիժիցլայի և Բ.Մուրտազինայի հեղինակած միայնակության գնահատման հարցաթերթը, հետազոտեցինք «միայնակ լինել» և «մենակ լինել» հասկացությունների իմաստային բնութագրերը: Հարցման մասնակիցների շուրջ 67%-ի տեսանկյունից «մենակ լինել» հասկացության հիմնական բնութագրերն են՝ համընդգրկունությունը, կայունությունը, երկարատևությունը և անփոփոխությունը, դրա հետ մեկտեղ նշելով մեկուսացվածությունը, խորացածությունը, մյուսների կողմից չհասկացված լինելը, ինչպես նաև աջակցության բացակայությունը:

Հարցվածների 74%-ի տեսանկյունից՝ «միայնակ լինել» հասկացության հիմնական բնութագրերն են՝ ժամանակավոր և հետադարձ ընթացք ունեցող վիճակը, առանձնանալու և արտաքին աշխարհից հանգստանալու հնարավորությունը, մարդու գիտակցված ընտրությունը և այլն: Ի տարբերություն ռուս գիտնականների (Բ. Մուրտազինա) հետազոտությունների, Հայաստանում գերիշխում են «միայնակ լինելու» հոգեվիճակի արդյունքները, ինչը դարձյալ հաստատում է ընտանիքի և հարազատների դերի կարևորությունը մեր հասարակությունում: Արդիական է դառնում «միայնակություն» հասկացության հիմնական բնութագրերը հաշվի առնելը համապատասխան սոցիալական և հոգեբանական ծառայություններ տրամադրելու գործընթացում:

Քննարկել ենք սոցիալականացման տարիքային ինստիտուտները, «դատարկված բույն» համախտանիշը և ընտանիքի դերը սոցիալական կապերի պահպանման գործում:

Երրորդ ենթագլխում, ելնելով նրանից, որ ծերանալուն զուգընթաց սրվում է անձի բնավորության գծերի արտահայտվածությունը, նվազում է ապրումակցման կարողությունը, նկատվում է հուզական ոլորտի տեղաշարժ դեպի բացասական հույզերի հատված, մենք անդրադարձել ենք հոգեկան առողջության խնդիրների հետազոտման հարցերին: Ինչը փաստում են նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալները, որոնց համաձայն 65-ն անց

տարիքում բնակչության 5%-ի, իսկ 80-ն անց անձանց 20%-ի մոտ նկատվում է թուլամտություն (դեմենցիա):

Խնամքի և խնամակալության հաստատություններում կիրառման համար նախատեսված պահանջմունքների գնահատման Կեմբրիջի տեղայնացված հարցարանների (CANSAS) միջոցով անցկացված հետազոտությունը ցույց տվեց հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների վիճակի, պահանջմունքների և հնարավորությունների համալիր գնահատման անհատական մոտեցման կարևորությունը: 1316 անձի գնահատման արդյունքում բացահայտվեց, որ 25,4%-ը կամ 334 մարդ իրենց ներկայիս վիճակով արդեն իսկ կարող են ծառայություններ ստանալ հաստատությունից դուրս (Հայաստանի տարեց քաղաքացիների սոցիալական ծառայությունների կարիքի հետազոտություն, 2016): Սա հաստատում է տարեցների ֆիզիոլոգիական, հոգեբանական և սոցիալական դետերմինանտների համալիր գնահատման և միայն դրանից հետո ծառայությունների փաթեթի մշակման անհրաժեշտության մասին մեր վարկածը:

**Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանում տարեցների սոցիալ-հոգեբանական դետերմինանտների էմպիրիկ հետազոտությունները և նրանց տարբերակված սպասարկման մոտեցումները»** գլխում, որը կազմված է երեք ենթագլուխներից, ներկայացված է աշխատանքի էմպիրիկ հենքը, որը կազմում են արտասահմանյան և հայրենական հոգեբանների, սոցիոլոգների հետազոտությունների արդյունքները, վիճակագրական տվյալները, 2009թ. Հայաստանում 1264 անձի շրջանում անցկացված բնակչության ծերացման խորքային հետազոտության տվյալները, 2016թ.՝ 120 մարդու և 2022-ին 140 շահառուների շրջանում անցկացված հետազոտությունների տվյալները, Հայաստանի և ԱՊՀ մյուս երկրների տարեց անձանց սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների հետազոտությունների համեմատական արդյունքները:

2021թ. Երևան քաղաքի Նորքի տուն-ինտերնատում սոցիալական սպասարկում ստացող 180 տարեցների հարցաթերթավորման մեթոդով անցկացված հետազոտության արդյունքները, 2024թ. տանը սոցիալական ծառայություններ ստացող (158 մարդ), սոցիալական սպասարկման ցերեկային կենտրոններում (116 մարդ), տուն-ինտերնատներում (124 մարդ), ընտանիքներում բնակվող (120 մարդ) տարեցների հարցաթերթավորման մեթոդով անցկացված հետազոտության արդյունքների ինտեգրված վերլուծությունը, սոցիալական ոլորտում ավելի քան 3 տարվա աշխատանքային փորձ ունեցող 40 սոցիալական աշխատողների, հոգեբանների և այլ մասնագետների հետ ձևայնացված հարցազրույցները, ինչպես նաև տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտի վիճակի, նորմատիվ իրավական բազայի վերլուծությունը, փորձագետների կարծիքները, տարեցների հետ հարցազրույցները կազմում են ատենախոսության փորձարարական ընտրանքը:

Ընդհանուր առմամբ, տարեցների սոցիալ-հոգեբանական մեխանիզմների և դետերմինանտների ցուցիչներն ուսումնասիրվել են 738 շահառուների շրջանում:

Հետազոտությունն անցկացվել է հարցաթերթիկների, թեստերի, զրույցների, անկախ բնութագրերի, ռեֆերենտումետրիայի և սոցիոմետրիայի մեթոդների միջոցով, նպատակ ունենալով բացահայտելու գլխավոր սոցիալ-հոգեբանական

դետերմինանտները, որոնց դիտարկումը կարող է ապահովել սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման հասցեականությունը և անհատականությունը, ինչն էլ իր հերթին կարող է նպաստել տարեցների կյանքի որակի բարձրացմանը:

Անցկացրել ենք սոցիալական սպասարկման ստացիոնար հաստատություններում գտնվող, իրենց տանն ապրող և սոցիալական սպասարկման ցերեկային կենտրոններ հաճախող տարեցների սոցիալական շփումների կարևորության հետազոտություն: Տարեցների շփումների, անձնական ձեռքբերումների, նպատակների կարևորության բացահայտման անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է հետազոտության մեջ հակադիր պնդումների մեթոդիկայի օգտագործումը ըստ «Սոցիոտրոպություն - անկախություն» սանդղակի նորգելանդական վարկածի, որը ներառում է չորս սանդղակ «Սոցիալական անվստահություն», «Կախվածություն», «Կապվածություն», «Ինքնաբավություն»: Ընտրանքը կազմել է իրենց տանն ապրող և սոցիալական աջակցության կենտրոններ այցելող 110 մարդ:

Ընդհանուր առմամբ ստացված ցուցանիշները վկայում են, որ հիմնական բավարարվածությունը պայմանավորված է ընտանեկան մտերիմ հարաբերություններով, ընտանեկան արժեքներով, հավատարմությամբ, անձնվիրությամբ ու բարենպաստ միջավայրով (դրական պատասխանների 87,8%): Բազմաթիվ պատասխաններ հաստատում են շփումների և սոցիալական աջակցության կարևորությունը: Քանի որ այլ ուղղություններով նույնպես նկատվում է դրական պատասխանների գերակշռում, ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ ընտանիքներում ապրող տարեցների կենսունակության մակարդակը զգալի բարձր է:


Ընդգծելով տարեցների սոցիալական շփումների կարևորությունը, կարծում ենք, որ այս դետերմինանտը, որը հատկապես դրսևորվում է հասուն տարիքում, պետք է հաշվի առնվի սոցիալ-հոգեբանական սպասարկման կազմակերպման (ձևեր և մեթոդներ, այլընտրանքային ակտիվացնող տեխնոլոգիաներ) ժամանակ, ինչը հաստատում է դետերմինանտների հանդեպ համալիր մոտեցման անհրաժեշտության մասին մեր վարկածը:

**Համեմատական վերլուծության հաստատման համար մենք կիրառել ենք հոգեհուզական վիճակի 4 բաղադրիչների՝ միայնակության, երջանկության, ինքնիրացման և ապագայի նկատմամբ վատատեսական (հոռետեսության) ինքնազնահատականի** վերաբերյալ երկու անկախ ընտրանքների միջինացված միավորների նկատմամբ Սթյուդենտի T-չափանիշը: Այս հետազոտությունը հաստատեց նորմատիվ մոդելների, արժեքների և վարքագծի ձևավորման մեջ սոցիալական շրջապատի, կյանքի և կեցության պայմանների, տարեցների տարբեր խմբերի նախընտրելի սոցիալական ակտիվության հիմնական ուղղությունների որոշման անհրաժեշտության և ակտիվացնող տեխնոլոգիաների օգտագործման հնարավորության դերի կարևորության մասին մեր ենթադրությունը:


**Տարեցների ընկճախտի և տազնապայանության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար՝** ծառայությունների տրամադրման ժամանակ դրանք

հաշվի առնելու նպատակով, 65-80 տարեկան 96 շահառուի շրջանում անցկացրել ենք առանձին ուսումնասիրություն: Արդյունքները ներկայացված են հիստոգրամներում թիվ 1 և թիվ 2.

Հիստոգրամա թիվ 1.



Հիստոգրամա թիվ 2.



Դեպքերի վիճակի ուսումնասիրության պատասխանների սանդղակի ըստ առաջնահերթության ներկայացումը հստակ ցույց է տալիս, որ տարեցների համար կարևոր է ինչ-որ բանով զբաղված լինելը, աշխատանք կամ/և նախասիրություն ունենալը, դրանցից բավականություն, հաճույք, ուրախություն զգալը:

Նկատելի է սոցիալական ցանցերի, տեսա-լսողական հնարավորությունների միջոցով սոցիալական կապերի գործոնի բարձրացումը: Այս գործոնը կարևոր է նաև տուն-ինտերնատներում ապրողների համար:

Այսպես, ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Երևանի Նորքի տուն-ինտերնատում տեսա-լսողական կապի ծառայության ստեղծման շնորհիվ բարեկամների, հարազատների, ընկերների հետ շփումը մեծապես նպաստեց տարեցների տրամադրության բարձրացմանը, լավ հիշողությունների թարմացմանը, մոտ 30-40% ընկճախտի ցուցանիշի իջեցմանը: Այսինքն՝ շփման ավանդական ձևերը վերափոխվում են նոր ձևաչափի, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել հոգեբանական և սոցիալական ծառայություններ մշակելիս և տրամադրելիս:

Ինչպես և ենթադրում էինք, հետազոտությունը ցույց տվեց, որ ընտանիքում ապրող տարեցների տազնապայնության մակարդակը ցածր է, մենակ կամ տուն-ինտերնատներում ապրողների համեմատ:

